Կ Ե Ն Ս Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«22» փետրվարի, 2018թ. ք. Երևան

Ես, Հայկ Արտաշեսի Հովհաննիսյանս, ծնվել եմ 1976թ. օգոստոսի 17-ին Երևան քաղաքում՝ ծառայողի ընտանիքում:

1993թ. ավարտել եմ Ն. Կ. Կրուպսկայայի անվան թիվ 19 միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ:

1998թ. ավարտել եմ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը և ընդունվել աշխատանքի ՀՀ Սահմանադրական դատարանում՝ որպես առաջատար մասնագետ:

1999թ. հանձնել եմ պետական որակավորման քննություն և համալրել ՀՀ փաստաբանների պալատի շարքերը:

1999թ. ավարտել եմ Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրան:

1999թ. համահիմնադրել եմ Ինվեսթմընթ Լոու Գրուպ ՍՊԸ փաստաբանական ընկերությունը, որտեղ աշխատել եմ որպես փոխտնօրեն և հարկային իրավունքի գծով խորհրդատու:

1999թ-ից հանդիսանում եմ ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատին առընթեր արբիտրաժային դատարանի փոխնախագահը:

1999 – 2000թթ. Մեծ Բրիտանիայի Թագուհու Բարձր Դատարանում հանդիսացել եմ ՀՀ Կառավարության և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշանակված փորձագետ՝ ՀՀ քաղաքացիական իրավունքի գծով:

2004թ. Մեծ Բրիտանիայի միջազգային և համեմատական իրավական ուսմունքների ինստիտուտի կողմից հրավիրվել եմ Լոնդոն որպես այցելու գիտնական – հետազոտող:

2007թ. ԱՄՆ Սիլիկոնային Հովտում արժանացել եմ Սինոփսիս կորպորացիայի լավագույն արտաքին իրավախորհրդատու տիտղոսին:

2013թ. հիմնադրել եմ Հովհաննիսյան և գործընկերներ ՍՊԸ փաստաբանական ընկերությունը, որի կառավարող գործընկեր եմ հանդիսանում մինչ օրս:

2015թ. վերապատրաստվել եմ Լոնդոնի CEDR (Վեճերի Արդյունավետ Լուծման Կենտրոնի) կողմից՝ ստանալով իրավասու հաշտարար - միջնորդի որակավորում: Նույն թվականին հանձնել եմ ՀՀ արդարադատության

նախարարության որակավորման քննությունները՝ ստանալով արտոնագրված հաշտարարի որակավորում:

2015թ-ից հանդիսանում եմ ՀՀ փաստաբանների պալատի լիազոր ներկայացուցիչը ՀՀ արդարադատության նախարարության հետ հարաբերություններում:

2013թ-ից հանդիսանում եմ ՀՀ փաստաբանական դպրոցի դասախոս:

2015թ. հանձնել եմ ՀՀ արդարադատության նախարարության պետական որակավորման քննությունները՝ ստանալով սնանկության գործերով կառավարչի որակավորում:

2016թ. հանդիսացել եմ Եվրոպական միության եւ Եվրոպական խորհրդի «Հայաստանի արդարադատության համակարգի անկախության, պրոֆեսիոնալիզմի եւ հաշվետվողականության ամրապնդում» համատեղ ծրագրի փորձագետ՝ հաշտարարության գործընթացում փաստաբանների հմտությունների զարգացման ձեռնարկի մշակման և վերապատրաստման գծով և վարել եմ վերապատրաստման դասընթացներ փաստաբանների համար CEDR-ի բրիտանացի գործընկերոջ հետ համատեղ:

2016թ. ԵՊՀ գիտական խորհրդում պաշտպանել եմ թեկնածուական ատենախոսություն «Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով՝ ստանալով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2016թ. Հայաստանի Հաշտարարների Ինքնակարգավորվող Կազմակերպության (ԻԿԿ) հիմնադիր ժողովի կողմից միաձայն ընտրվել եմ ԻԿԿ նախագահ:

2017թ. գլխավորել եմ Հայաստանի Արբիտրաժային Միություն ՀԿ-ն:

2017թ. ՄԱԿ-ի դիտորդ անդամ հանդիսացող Առևտրի Միջազգային Պալատի (ICC) Համաշխարհային Խորհրդի կողմից ընտրվել եմ 1923թ-ից գործող Արբիտրաժի Միջազգային Դատարանի (նստավայրը՝ ք. Փարիզ) անդամ՝ այդպիսով առաջին անգամ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունն այդ հեղինակավոր միջազգային արբիտրաժային դատարանում:

2017թ. հանդիսանում եմ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի առաջատար փորձագետ՝ ՀՀ-ում սնանկության օրենսդրության բարեփոխման գծով:

2017թ. ՀՀ արդարադատության նախարարության առաջարկով նշանակվել եմ ՄԱԿ-ի Միջազգային Առևտրային Իրավունքի (UNCITRAL) Նախադեպային Իրավունքի Հանձնաժողովի (CLOUT) ազգային թղթակից անդամ:

Կից ներկայացնում եմ.

Գիտական աշխատությունների ցանկ

ՀՀ արդարադատության նախարարի տեղեկանք

ՀՀ փաստաբանների պալատի տեղեկանք

Արբիտրաժի միջազգային դատարանի տեղեկանք

Քաղվածք աշխատանքային գրքույկից